<< Էդիթ Պրինտ>>հրատարակչություն

Ավարտական հետազոտական Աշխատանք

Թեմա՝ Ինտեգրված պարապմունքների կազմակերպումը՝ կարողունակահեն կրթական մոտեցման համատեքստում

Դասատություն՝<< Ստելլա>> մանկապարտեզ

Դաստիարակ՝ *Կուրղինյան Արմինե*

Ղեկավար՝ *Ավետիսյան Ժաննա*

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ----------3

ԻՆՏԵԳՐՎԱԾ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ՝ ԿԱՐՈՂՈՒՆԱԿԱՀԵՆ ԿՐԹԱԿԱՆ ՄՈՏԵՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ----------4

ԻՆՏԵԳՐՎԱԾ ՊԱՐԱՊՆՈՒՆՔ----------10

ԹԵՄԱՏԻԿ ՆԿԱՐՆԵՐԻ ՑՈՒՑԱԴՐՈՒՄ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄ----------14

ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄ----------15

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ----------20

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ----------

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Նախադպրոցականի զարգացման գործընթացում այսօր առավել կարևոր է հետևյալ հարցադրումը՝ինչպե՞ս կազմակերպել 3-6 տարեկան երեխաների ուսուցման գործընթացը, ինչպիսի ուղիներ, մեթոդներ, ձևեր են ենանհրաժեշտ, որոնք կհամապատասխանեն երեխաների հնարավորություններին, կբավարարեն նրանցպահանջները և միաժամանակ կապահովեն արդյունավետություն և որակ:

Յուրաքանչյուր երեխա օժտված էգիտելիքների յուրացման միայն իրեն հատուկ միջոցներով: Դրանքպայմանավորված են ազգային, սեռային, մշակութային և ֆիզիկական առանձնահատկություններով: Դաստիարակի դերն է՝օգնել երեխաներինյուրացնելու գիտելիքները:

Ինտեգրված պարապմունքները նպատակաուղղված են տարբեր մեթոդիկաներիմիջեւ կապերի դրսեւորմանը, առարկաների կամ երեւույթների համակողմանիուսումնասիրմանը, գիտելիքների համակարգվածությանը, ստեղծագործականերեւակայության զարգացմանը: Անհրաժեշտ է միեւնույն թեմայի բովանդակությանշուրջ կառուցել ինտեգրված պարապմունք եւ հստակեցնել առաջադրանքըպարապմունքի յուրաքանչյուր փուլում: Անհրաժեշտ է ընդհանրականհասկացությունները ներկայացնել հաջորդականությամբ, կիրառելով երեխաներիճանաչողական գործունեության ակտիվացման տարբեր միջոցներ:

Ինտեգրված պարապմունքները ապահովում են երեխայի մտավոր, սոցիալական, հուզական, ֆիզիկական և գեղագիտականոլորտների համակողմանի զարգացումը:

Ինտեգրված պարապմունքները երեխային տալիս են բավականին լայն ու վառ պատկերացումներշրջապատող աշխարհի մասին, ուր նա իրապես ապրում է, փոխհարաբերությունների մեջ էերևույթների և առարկաների հետ, կապված է աշխարհում առկա բազմաթիվ նյութական ուգեղարվեստական մշակույթների հետ: Հիմնական շեշտը դրվում է ոչ այնքան որոշակի գիտելիքներիյուրացման, որքան ստեղծագործական մտածողության զարգացման վրա: Սա հաստատում էերեխաների հետ գործնական աշխատանքի արդյունավետությունը՝ պարապմունքի տվյալ ձևիկիրառմամբ:

ԻՆՏԵԳՐՎԱԾ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ՝ ԿԱՐՈՂՈՒՆԱԿԱՀԵՆ ԿՐԹԱԿԱՆ ՄՈՏԵՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Նախադպրոցական կրթության հիմնական նպատակն է ապահովել երեխայի մտավոր, սոցիալական,հուզական, ֆիզիկական և գեղագիտական ոլորտների համակողմանի ու ներդաշնակ զարգացումը: Այսնպատակին հասնելու ուղիներից է մանկապարտեզում ուսումնառությունը ինտեգրված պարապմունքներիմիջոցով կազմակերպելը:

Թեմատիկ պարապմուքների ընթացքում կարևորվում են գործունեության այն ձևերը, որոնք պահանջում են ինքնուրույն մտածողություն, նախաձեռնողականություն, համագործակցություն, հնարամտություն, կարգապահություն և այլն: Մանկապարտեզում կրթադաստիարակչական գործընթացիժամանակակից պահանջներին համապատասխան կազմակերպումը դաստիարակից պահանջում է պրակտիկգործունեության կատարելագործում՝ բովանդակային նոր մոտեցումների, երեխաների ճանաչողականգործունեության ձևերի ու մեթոդների կիրառմամբ: Նախադպրոցական կրթության մեթոդական նորացմանկարևոր ուղղություններից է ինտեգրված պարապմունքների անցկացումը մանկապարտեզի մանկավարժականգործընթացում:

Ինտեգրված պարապմունքները նպատակաուղղված են տարբեր մեթոդիկաների միջեւ կապերիդրսեւորմանը, առարկաների կամ երեւույթների համակողմանի ուսումնասիրմանը, գիտելիքներիհամակարգվածությանը, ստեղծագործական երեւակայության զարգացմանը: Անհրաժեշտ է միեւնույն թեմայիբովանդակության շուրջ կառուցել ինտեգրված պարապմունք եւ հստակեցնել առաջադրանքը պարապմունքիյուրաքանչյուր փուլում: Անհրաժեշտ է ընդհանրական հասկացությունները ներկայացնել հաջորդականությամբ, կիրառելով երեխաների ճանաչողական գործունեության ակտիվացման տարբեր միջոցներ: Նախադպրոցականտարիքի երեխաների ուսումանսիրմամբ զբաղվող Ն.Գաբիշը իր ուսումնասիրություններում մանրամասնվերլուծել է ինտեգրված պարապմունքը՝ թե՛ բովանդակյին, թե՛ կառուցվածքային կողմերով:

Ինտեգրվածպարապմունքը ուղղված է որոշակի թեմայի ամբողջական բացահայտմանը գործունեության տարբեր ձևերիկիրառմամբ՝ խաղ, աշխատանքային գործունեություն, կերպարվեստային գործունեություն, պարապմունքներ:

Ինտեգրված պարապմունքի կառուցվածքային կողմը պահանջում է նյութի հստակություն և տարբերմեթոդիկաների միջև տրամաբանական կապի ապահովում: Դա կարող է իրականացվել պարապմունքիընթացքում՝ ինտերակտիվ մեթոդների և ժամանակակից մոտեցումների կիրառմամբ: Ինտեգրված պարապմունքիննախապատրաստվելիս դաստիարակը կարող է օգտվել ինտելեկտուալ քարտի մեթոդից: Ինտելեկտուալ քարտըորոշակի թեմայի բովանդակայի ուսումնասիրմանկառուցվածքային, տրամաբանական սխեմա է, որտեղարտացոլվում են հանգուցային հասկացությունը կենտրոնում, իսկ օժանդակ հասկացությունները՝ հանգուցայինհասկացության շուրջ:

Այս քարտերն օգնում են բացահայտել հասկացության բնույթը, որն ուսումնասիրվում է պարապմունքիընթացքում, ինչպես նաև այդ հասկացության կապը այլ երևույթների, առարկաների, գործընթացների հետ: Մշակված քարտը հիմք է հանդիսանում տարբեր թեմաներով պարապմունքների հետագա մոդելավորման և անցկացման համար: Ինտեգրված պարապմունքին առաջարկվող թեմաներն են՝ «Ջուր», «Տարվա եղանակներ», «Կենդանական աշխարհ», «Տոնածառ», «Բնություն», «Տերեւների զանազանություն», «Շինարարություն», «Հաց», «Անտառ», «Իմ մանկապարտեզը», «Հայրենիք», «Մարտի 8», «Ամանոր», «Հայոց բանակի օրը» և այլն:

Նախադպրոցականհաստատությունումպարապմունքըուսուցմանգործընթացիհիմն ականձևնէ:

Դասականհոգեբան-մանկավարժներ՝Լ.Ս.Վիգոտսկին, Ա.Ն.Լեոնտեւը, Ա.Ա. Լյուբլինսկայան, Դ.Բէլկոնինը, Վ.Ս.Մուխինան, ընդգծելենուսուցմանզարգացնողուդաստիարակողդերը, դավերաբերվումէ նաև ավագնախադպրոցականիմտավորզարգացմանը, որըտեղիէունենումիմնականում, պարապմունքերիընթացքում:

Մտավորկարողություններիզարգացմանհաջողությունըկախվածէուսուցմանբովանդ ակությունից, մատուցվողնյութիհասանելիությունից:

Ուսուցանվողնյութըերեխաներիմտածողությանըտալիսէորոշակիուղղություն, այնպաստումէ ինչպես, երեխայիգործնականմտածողությանզարգացմանը, այնպեսէլիմացականմտածողությանը:
Երեխաներինմատուցվողնյութըպետքէլինիարդիական, ճշմարիտ, ունենակենսականնշանակություն, հնարավորությունտալնկալելունորը,

բխիժամանակակիցկյանքիպահանջներից և նպաստինրանցտրամաբանականմտածողությանը:

Ուսուցմանընթացքումպահանջվումէհենվելերեխաներիփորձի, նրանցպատկերացումների և ըմբռնումներիվրա:

Ուսումնադաստիարակչական գործընթացը ճիշտ և արդյունավետ կազմակերպելու համար, անհրաժեշ է հաշվի առնել նախադրոցական տարիքի երեխաների կարողունակությունների չափորոշիչները:

Նախադպրոցական կրթության կարողունակություններն են՝

1) լեզվական և հաղորդակցական կարողունակություն՝ երեխան տիրապետում է գրականհայերենին, հաղորդակցվում տարբեր իրավիճակներում և միջավայրերում, դրսևորումխոսքային և ոչ խոսքային ակտիվություն՝ մասնակցություն ունենալով հասարակականկյանքին: Ընդունակ է ճանաչել բանավոր ներկայացվողերևույթները, ըմբռնել, նկարագրել, մեկնաբանել դրանք, ներկայացնել բացատրություններ: Երեխան ունակ է կողմնորոշվելլեզվական միավորներում՝ հնչյուն, բառ, նախադասություն, ունի տարրականպատկերացումներ վանկի, հնչյունի և տառի մասին, ինքնուրույն ձևակերպում է սեփականմտքերը՝ ազատ և կապակցված արտահայտելով կարծիք, վերաբերմունք որևէ երեւույթիմասին: Այլ մարդկանց հետ հաղորդակցության մեջ պատկերացնում է տեղեկատվականտեխնոլոգիաների դերը և մեծահասակների օգնությամբ կիրառում դրանք.

2) ճանաչողական և մոտիվացիոն կարողունակություն՝ երեխան, իր տարիքինհամապատասխան, ընդունակ է պատճառահետևանքային կապեր տեսնել երևույթների,իրադարձությունների միջև, ճանաչել առարկաների եւ օբյեկտների կապերը, հարաբերությունները, նոր խնդիրներ լուծել: Դրսևորում է ակտիվություն,հետաքրքրասիրություն, ճանաչողական հետաքրքրություն աշխարհի, առարկաների և երևույթների, ինչպես նաև հարաբերությունների կառուցման հանդեպ: Երեխան հաճույքով(ակտիվ) ներգրավվում է գործունեության տարբեր ձևերի, մտավոր տարբերգործողությունների, նոր բացահայտումների մեջ.

3) ինքնաճանաչողական եւ սոցիալական կարողունակություն՝ երեխան ճանաչում է իրարտաքին առանձնահատկությունները, ձեռք է բերում սեռադերային պատկերացումներ: Երեխան ունի պատկերացում սեփական հնարավորությունների մասին, վստահությունսեփական ուժերի և կարողությունների հանդեպ: Ընդունակ է ինքնակազմակերպվելու, դրսևորում է ինքնուրույնություն եւ ինքնասպասարկման

հմտություններ: Գործողություններումդրսևորում է նպատակաուղղվածություն եւ կենտրոնացվածություն: Երեխան ճանաչում էսեփական և այլոց հույզերը, կարողանում է կառավարել սեփականհույզերը: Ճանաչում էմեծահասակների և հասակակիցների փոխհարաբերություններում սահմանված վարքայինկանոնները և դրսևորում է սոցիալապես ընդունված նորմերին համապատասխան վարք: Շփման մեջ նախաձեռնող և կառուցողական է, դրսևորում է ընկերակցելու, համագործակցելուհմտություններ.

4) ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն նախադպրոցականտարիքում երեխան տիրապետում է բարեվարքության եւ սոցիալական արդարությանպարզագույն կանոններին. Դրսևորում է հարգանք և հոգատարություն շրջապատի հանդեպ, գնահատում է արարքների բարոյական ուղղվածությունը: Ճանաչում է հայրենիքը, Հայաստանիխորհրդանիշները (դրոշ, զինանշան, օրհներգ), դրսևորում է սեր և նվիրվածություն հայրենիերկրի հանդեպ: Ունի տարրական պատկերացումներ սեփական իրավունքների ուպարտականությունների մասին.

5) թվային և մեդիա կարողունակություն՝ երեխան ունի տարրական պատկերացումներմեդիայի վերաբերյալ, կողմնորոշվում է մեդիա բազմազանության մեջ, մեծահասակիաջակցությամբ գնահատում է ներկայացված տեղեկատվությունը, այն համադրում սեփականպատկերացումներին՝ դրսևորելով քննադատական եւ ընտրողական մոտեցում: Երեխանկարողանում է օգտվել մեդիա տարրական գործիքներից՝ միեւնույն ժամանակ հասկանալովդրանց կիրառման հնարավոր վտանգները եւ այդ հարցում սեփականպատասխանատվությունը: Երեխան դրսեւորում է առարկաների, երևույթների մոդելավորման և ստեղծագործական կարողություններ, տարբերում է իրական եւ վիրտուալ աշխարհները, հասկանում դրանց տարբերությունները.

6)մշակութային կարողունակություն՝ երեխան կարողանում է գնահատել գեղեցիկը, ճանաչում և վերլուծում է հանրահայտ հայ և արտասահմանյան մանկագիրների գեղարվեստական ստեղծագործությունները, ճանաչում է ազգային և համաշխարհային մշակութային նմուշների ինքնատիպությունը: Դրսևորում է ընդգծված հետաքրքրություն գեղարվեստական գործունեության հանդեպ, ունակ է երաժշտության, կերպարվեստային գործունեության տարբեր տեսակների, ազգային տոների ու ավանդույթների միջոցով արտահայտելու սեփական հույզերը, զգացմունքներն ու տպավորությունները.

7) մաթեմատիկական եւ տեխնիկական կարողունակություն՝ երեխան կարողանում էկատարել պարզ մաթեմատիկական գործողություններ, համեմատում, հետազոտում էառարկաները եւ երևույթները, գտնում է տարբեր խնդիրների լուծումներ, ճանաչում էթվանշանները, տիրապետում է նախաթվային և թվային հասկացություններին. երեխան կարողանում է որոշել առարկաների քանակը, համեմատել դրանք ըստմեծության, չափի, ձևի և գույնի, տարբերակել մասը եւ ամբողջը, երկրաչափականպատկերներն ըստ հատկանիշների: Կարողանում է առարկաները տարբերակել նաևըստ նյութի: Ցուցաբերում է հետաքրքրություն սարքավորումների հանդեպ, կարողանում է ծանոթ տեխնիկական հանգույցներից կառուցել նոր համադրություններ.

8) տնտեսական կարողունակություն՝ երեխան կարողանում է համարժեք ճանաչել և վերլուծել մեծերի աշխատանքը և դրանից ստացված արդյունքները: Գիտի տարբերմասնագիտությունների անվանումներ և դրանց առանձնահատկությունները: Ցուցաբերում է տնտեսական պարզ հասկացությունների իմացություն, գիտի իր հետառնչվող առարկաների ձեռքբերման եղանակները, կիրառում է տնտեսական պարզբառապաշար: Երեխան հասկանում է շրջապատող աշխարհի և բնությաներևույթների միասնականությունն ու փոխկապակցվածությունը: Ճանաչում էբնության երևույթները, գիտի բնության առանձին երևույթների վտանգների, դրանցիցպաշտպանվելու մասին, անվտանգ վարքագիծ է դրսևորում բնության առանձիներևույթների՝ կայծակի, ամպրոպի, կարկուտի, անձրեւի, մառախուղի ժամանակ: Ունիտարրական պատկերացումներ շրջակա միջավայրի եւ դրա պահպանման վերաբերյալ: Կարողանում է նկարագրել մարդու և տնտեսության ազդեցությունը բնության վրա: Հասկանում է շրջակա միջավայրի պահպանման գործում սեփական դերը, նշանակությունը և մասնակցում է այդ գործընթացում.

9) ֆիզիկական կուլտուրայի կարողունակություն՝ երեխան պատկերացում ունիֆիզիկական վարժությունների առողջարարական նշանակության, առողջ սննդի, առողջ ապրելակերպի վարման հիմնական կանոնների՝ օրգանիզմի կոփման, օրվառեժիմի, հիգիենիկ կանոնների, ճիշտ կեցվածքի պահպանման մասին: Ընկալում էֆիզիկական վարժությունների ճիշտ կատարման ձեւը, ճանաչում և տարբերում էամառային և ձմեռային մարզաձևերը: Ընդհանուր պատկերացում ունի շարժողականընդունակությունների, տարածված մարզաձևերի, մարզագույքի, սպորտայինհանդերձանքի մասին, ճանաչում է հայ և այլազգի անվանի մարզիկներին: Երեխանընդունակ է ճիշտ կատարելու մարմնամարզական,

աթլետիկական վարժություններ, տարաբնույթ շարժողական գործողություններ շարժախաղերում, մարզախաղերում, շարժողական ակտիվության այլ ձևերում: Դրսևորում է անհրաժեշտ ֆիզիկականպատրաստվածություն և պահպանում է առողջ ապրելակերպի վարման կանոնները:Երեխան ինքնուրույն կատարում է նմանողական շարժումներ, ընդհանուր զարգացնողվարժություններ՝ առանձին, զույգերով, մարզագույքով: Վարժությունների կատարմանընթացքում, շարժախաղերում, թիմային խաղերում դրսևորում է ինքնուրույնություն, կարգապահություն, կամք, պատասխանատվություն, համագործակցություն, վճռականություն, փոխօգնություն, ընկերասիրություն, նախաձեռնողականություն:

Կարողունակությունները նախադպրոցական տարիքի երեխաների կողմից ուսումնառության և դաստիարակության գործընթացում ձեռք բերված գիտելիքի, հմտությունների, արժեքների և դիրքորոշումների հիման վրա ըստ իրավիճակի արդյունավետ ու պատշաճ արձագանքելու ձևեր են: Նախադպրոցական տարիքի երեխաների կարողունակությունները ձևավորվում են ուսուցման և դաստիարակության կազմակերպման միջոցով:. Նախադպրոցական տարիքի երեխաների զարգացման և կրթական վերջնարդյունքները նկարագրում են, թե ինչ պիտի իմանա, կարողանա անել և հասկանա վեց տարեկան երեխան: Վերջնարդյունքներն ուղղված են կարողունակությունների ձևավորմանը:

ԻՆՏԵԳՐՎԱԾ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

Թեմա ՝ <<Անվտանգ վարքագիծ>>

Տեսակ՝ խոսքի զարգացում

Խումբը՝ Ավագ /Ա/

Տևողությունը՝ 25 րոպե

Նպատակը՝ երեխաներին տալ գիտելիքներ անվտանգ վարքագծի մասին:

Խնդիրներ՝

Դաստիարակել անվտանգ վարքագիծ

Զարգացնել կապակցված խոսք

Բառապաշարը հարստացնել նոր բառերով

Անհրաժեշտ պարագաներ՝ տարբեր վտանգներ պատկերող նկարներ,ցուցապաստառ՝ հրշեջ մեքենայի,ոստիկանության,շտապ օգնության մեքենաների,անհրաժեշտ իրերի նկարներով,նկարներ,որտեղ պատկերված է սխալ վարքագիծ,նամականիշ,ոստիկանի գլխարկ,բժշկի համազգեստ:

Ընթացք

Խմբասենյակի դուռը թակում են և ինձ հանձնում մի նամակ:

- Երեխանե’ր,ապա նայեք, մեր խմբասենյակ նամակ բերեցին,տեսնենք ով էուղարկել այն:

<<Բարև ձեզ,սիրելի փոքրիկներ:Ձեզ նամակ է գրել հարցասեր Ինչուիկը,ես միքանի հարց եմ ձեզ ուզում տալ,խնդրում եմ պատասխանեք այդ հարցերին:
-Երեխաներ ինչ եք հասկանում անվտանգություն,անվտանգության կանոններասելով:

-Ձեր ծնողները անվտանգության ինչ խորհուրդներ են տալիս ձեզ:

-Անվտանգության ինչպիսի ծառայություններ գիտեք:

Սիրով հարցասեր Ինչուիկից

Երեխաների հետ անցկացնում ենք զրույց այն մասին,թե ինչ է նշանակում

անվտանգություն,անվտանգ վարքագիծ:

-Երեխանե'ր, երբ մենք ասում ենք անվտանգություն ինչ է դա նշանակում՝

զգուշավորություն, հաճախ ձեր ծնողները ձեզ ասում են ՝ զգո'ւյշ կլինես,

ճանապարհն անցնելիս ուշադի'ր կլինես,անծանոթերին չպատասխանե'ս և

այլն,դա նշանակում է,որ կան որոշակի կանոններ,որոնց մենք պիտի

հետևենք,որպեսզի մեր կյանքը լինի ավտանգ:

-Օրինակ,ձեր ծնողները ինչ խորհուրդներ են ձեզ տալիս:

-Երեխաներ մեր կյանքի անվտանգության համար կան որոշակի

ծառայություններ,որոնցից յուրաքանչյուրը մեզ օգնության կարող է հասնել

որևէ իրավիճակում:

Եկե՛ք,միասին պարզենք թե,որոնք են այդծառայությունները:

Որևէ մեկը կռահեց,թե որոնք են այդ ծառայությունները:



-Այժմ ես ձեզ կասեմ հանելուկներ և դուք պիտի կռահեք,թե դա որ մասնագիտությունն է՝

Կրակի հետ ենք պայքարում

Մարդկանց այրվող տներ փրկում:

/Հրշեջ/

Երբ հիվանդ ենք ,շտապ հասնում է

Ու դեղեր է նշանակում

Բոլոր մարդկանց նա բուժում է,

Ու ոտքի է կանգնացնում:

/Բժիշկ/

Նա հսկում է կարգ ու կանոն

Միշտ աչալուրջ է լինում,

Հենց տեսնում է անկարգ մարդկանց,

Շտապ օգնության է հասնում:/ոստիկան/

Թեմատիկ նկարների ցուցադրում և քննարկում

Իրավիճակների առաջադրում

1.Մի օր փոքրիկ Արամը,դուրս է գալիս տանից առանց իր մայրիկին հարցնելու:ՈՒզում է գնալ և տեսնել,թե ինչ է կատարվում փողոցում,մարդիկ ինչով են զբաղված:Երբ նա դուրս է գալիս փողոց սկսում է քայլել ինչ որ ուղղությամբ, և այնքան է հեռվանում իրենց փողոցից,որ այլևս չի կարողանում գտնել տունդարձի ճիշտ ճանապարհը:Սկսում է լացել լինել,իր մայրիկին կանչել և հանկարծ իրեն է մոտենում...../ոստիկանը և օգնում է գտնել իր տունը/:

2.Երեխաները հավաքվել և խաղում էին բակում իրենց սիրելի պահմտոցի խաղը,հանկարծ երեխաներից մեկը թաքնվելուց հետո սկսեց լացակումած ձայնով բղավել՝ օգնեցե՛ք,օգնեցե՛ք:Մյուս երեխաները վազում են այդ կողմ տեսնելու թե ինչ է եղել իրենց ընկերոջը:Երբ հասան երեխային նրանք տեսան,որ երեխան ընկած է գետնին և ոտքը վնասվել է:Երեխան փորձել էր բարձրանալ պատը և վայր էր ընկել:Երեխաները օգնություն են կանչում և նրանց է մոտենում մի կին,նա տեսնելով երեխային անմիջապես զանգահարում է...../շտապ օգնություն/

3.Լիլիթը իր ծնողների հետ տանից առավոտյան դուրս էր եկել և գնացել էր այգի մի փոքր հանգստանալու:Երբ նրանք վերադանում են տուն,նկատում են,որ իրենց տան պատուհանից ծուխ է դուրս գալիս,նրանք հասկանում են,որ հրդեհ է բռնկվել և անմիջապես զանգահարում են...../հրշեջ

Ցուցադրված նկարների քննարկում

Մի՛ խոսիր անծանոթի հետ

Մի՛ զայրացրու շանը

Խաղալիս
Մի՛ վազիր փողոց

Մի՛ նստիր պատուհանագոգին

Ֆիզկուլտ դադար՝ երեխաների հետ միասին կատարում ենք հետևյալ Տեսանյութում ներկայացվող վարժանքը

«Սևուկ ուլիկը» հեքիաթի ընթերցում

Երբ Սևուկ ուլիկի մայրիկը վերադառնում է տուն արոտից,ուլիկը վազում է իր մայրիկի մոտ և ասում՝

- Գիտե՞ս, մայրի՛կ, ինչ եղավ: Մի քիչ առաջ մեկը եկավ, դուռը զարկեց ու կանչում էր.

Սևուկ ուլիկ, Սիրուն բալիկ:

Ասում էր՝ դուռը բա՛ց արա: Էնպե՛ս հաստ ձայն ունե՛ր: Էնպե՛ս վախեցա՛, էնպե՛ս

վախեցա՛... Դուռը բաց չարի, ասի՝ չեմ ուզում, գնա՛...

— Պա՛, պա՛, պա՛, պա՛, Սևուկ ջան, ի՛նչ լավ է եղել, որ բաց չես արել,— ասաց վախեցած մայրը:— Էդ գայլն է եղել, եկել է, որ քեզ ուտի: Մյուս անգամ էլ որ գա, բաց չանես, ասա՝ գնա՛, թե չէ իմ մայրը քեզ կսպանի իր սուրպոզերով:

-Երեխանե՛ր,սևուկ ուլիկը անվտանգության որ կանոնին էր հետևել՝ անծանոթների առաջ դուռը բաց չի կարելի անել:

-Ինչ կլիներ եթե դուռը բաց աներ նա՝ գայլը կուտեր իրեն:

-Երեխաներ իսկ հիշում եք Գնդլիկ Բոքոնիկը ինչ արեց,նա անվտանգ վարքագծի,որ կանոնը չպահպանեց ՝ առանցմեծերին հարցնելու տան բակից փախավ և դրա արդյունքում դարձավ աղվեսին կեր:

-Երեխանե՛ր,իսկ <Քնած գեղեցկուհին և յոթ քաջերը>հեքիաթի մեջ գեղեցկուհին ինչ անզգույշ քայլ կատարեց,ինչունա քնեց ՝քանի որ նա վերցրել էր անծանոթի ձեռքից խնձորը և կերել էր:/Անծանոթի ձեռքից ոչինչ չի կարելիվերցնել:

Հարցերի օգնությամբ ամփոփում ենք թեման :

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից մանկավարժական գրականության մեջ հեղինակները շատ հաճախչեն տարբերում «համալիր» և «ինտեգրված» պարապմունքների հասկացությունները՝ դրանքներկայացնելով որպես հոմանիշներ: Այնուամենայնիվ, այս հասկացությունների միջևական որոշակի բովանդակային տարբերություններ:

Ինտեգրված պարապմունքը դա պարապմունքի տեսակ է, որումթեմայի բացահայտումը տեղի է ունենում տարբեր տեսակի գործունեությանհամակցությամբ՝ մեկ կրթական վեկտորից աննկատ, ներդաշնակ անցումով(«Գիտելիք», «Ֆիզիկական զարգացում», «Գեղարվեստական և ստեղծագործականզարգացում» և այլն: .) մյուսին:

Ինտեգրված և համալիր պարապմուքներն ունեն որոշակի նմանություններ, բայցտարբեր ուղղություններ. Նման պարապմունքների հիմնական խնդիրներն են.

- Երեխաների համակողմանի դաստիարակությունը

- Կոնկրետ առարկաների մասին ամբողջական պատկերացումների ձևավորումը

- Տարբեր հասկացությունների ինտեգրման և գործունեության տարբեր ձևերում երեխայինընդգրկելու հիման վրա: Ինտեգրված պարապմունքն ուղղված է որոշակի թեմայի ամբողջական էության բացահայտմանըգործունեության տարբեր ձևերի կիրառմամբ: Ինտեգրված պարապմուքնի կառուցվածքը պահանջում էնյութի հստակություն, տրամաբանական կապ տարբեր մեթոդիկաների միջև: Դա իրագործվում էպարապմունքի ընթացքում երեխաների հետ տարվող աշխատանքի կազմակերպման ժամանակակիցմոտեցումներով, ինտերակտիվ գործունեությամբ:

Ինտեգրված պարապմունքը կառուցվում է մեկ ամբողջական գործունեության հենքով, որըմիավորում է հսկայական տեղեկատվական դաշտ՝ փոխադարձ ներթափանցմամբ ևընդհանրացումներով:

Ինտեգրված պարապմունքները սկզբունքորեն պահանջում են հստակ մտածողություն ևտրամաբանություն՝ ուսուցման բոլոր փուլերում: Սա նպաստում է համահավաք, կենտրոնացվածծրագրային նյութի յուրացմանը՝ փոխգործուն աշխատանքների կիրառմամբ:

Ինտեգրված պարապմունքները դաստիարակի և հոգեբանի, մանկավարժի, երաժշտական ղեկավարի, լոգոպեդի և ֆիզկուլտուրայի հրահանգչի համատեղ աշխատանքի արդյունք են, այսինքն՝մանկավարժական գործընթացը, որը հիմնված է ինտեգրման սկզբունքների վրա, խթանում է բոլորմասնագետների ամուր կապը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1.ՀովհաննիսյանԱ. Դաստիարակությանհարցեր«Վա–Հա», Երեւան2003

2.ՀովհաննիսյանԱ.Ա., ՄարությանՍ. Ա. Խոսքիզարգացմանպարապմունքներըմանկապարտեզիկրտսեր2-րդխմբում, Երեւան 2014էջ50-88

3.В.И.Турченко Дошкольная педагогика Москва 2014

4. Основная образовательная программа дошлольного образования, Москва 2015